

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՕՐՐԱՆ

ՀՏԳ- 941 (479.25):325

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

Շ 973

Գիտաժողովը նվիրվում է

Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Արտակ Մադալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, Վլադիմիր Բարխուդարյան – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Բաբկեն Հարությունյան – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, Աշոտ Մելքոնյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, Ռուբեն Սաֆրաստյան – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Արարատ Աղասյան – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Պավել Ավետիսյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ԷՍԹԵՐ ԽԵՄՉԱՆ
ՀՀ ԳԱՆ ՀԱԻ

**ԺՈՂՈՎՐԳԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՈՒ
ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔՈՒՄ**
(XIX դարի 60-ական թվականներից
մինչև XX դարի 60-ական թվականները)

Հայ իրականության մեջ XIX դարը նշանավորվեց ազգային ինքնագիտակցության բուռն վերելքով: Հայ ազգի երկու հատվածները՝ արևելյանն ու արևմտյանը, թեև իրարից բաժան ու սահմանազատված, թևակոխեցին պատմական կյանքի մի նոր փուլ, որի զարգացման գրավականը անառարկելիորեն նոր առաջադեմ հայացքները, գիտելիքներն ու մոտեցումներն էին: Հատկապես հետաքրքրության կենտրոնում հայտնվեցին ազգի հոգևոր արժեքները, ժողովրդագիտական (ազգագրական, բանահյուսական) անբավ հարստությունները: Ժողովրդական տոների, հավատալիքների, սովորույթների, կյանքի ու կենցաղի, բանավոր խոսքի բազմազան դրսևորումների որոնումը, հայտնաբերումն ու գրառումը դարձան առաջադեմ մտավորականության զբաղմունքը:

Համընդհանուր համահայկական առաջադիմական շարժման մեջ Շուշին իր ուրույն դերն ունեցավ: Ռուսական տիրապետության հաստատումը շրջադարձային դեր խաղաց արցախահայության կյանքում: Ասիական խեղճ ու խավար, ստրկական միջավայրում կեղեքվող ժողովուրդը հնարավորություն ստացավ ոտք դնելու խաղաղ զարգացման ուղին, շփվելու եվրոպական ու ռուսական քաղաքակրթությունների հետ և կազմակերպելու սեփական մտավոր կյանքը առաջադիմության ուղիով տանելու գործը: 1820-ական թվականներին «Բազելի ավետարանական ընկերության» նախաձեռնությամբ Շուշիում հիմնադրվեցին տպարան և դպրոց, որին հետևեց հայկական թեմական դպրոցի (1838 թ.) հիմնադրումը: Այդ ժա-

մանակահատվածում Շուշին արդեն ոչ միայն գավառական, վարչական, այլև մշակութային կենտրոն էր: Շուշիի և շրջակա բնակավայրերի ուսումնատենչ երիտասարդությունը, գրագիտության և կրթության հնարավորություն ստանալով, սկսեց նորովի գնահատել ազգային մշակութային արժեքները: Դպրոցական-կրթական համակարգի կատարելագործումն ու լուսավորական շարժումը խթան հանդիսացան նոր, ավելի ուսյալ սերնդի ձևավորմանը: 1860-ական թվականներին Շուշիի դպրոցական կառույցը համալրվեց Սարիամյան իգական դպրոցով (1864 թ.), որով փորձ արվեց հավասարակշռություն մտցնել երկսեռ սերնդի միջև: Եվ վերջապես 1881 թ. Շուշիում բացվեց նաև պետական ռեալական ուսումնարանը¹, որը պետք է լրացներ այն բացը, որ կար ուսումնական համակարգում: Եվ այսպես, արցախահայության համար Շուշին դարձավ կրթական ու մշակութային կենտրոն, որտեղ ուսումնառություն ստացած շատ երիտասարդներ, անկախ դասակարգային պատկանելությունից, ծագում էին բարձրագույն կրթություն ստանալ ռուսական և եվրոպական համալսարաններում և, ինչպես նկատել է Ստ. Լիսիցյանը, հազիվ թե գտնվի հայկական որևէ մարզ, որը բարձրագույն ուսումնական հաստատություններին մատակարարեր այդպիսի մեծ քանակակազմ, ինչպես Ղարաբաղը²:

Այն բուռն գործընթացը, որ վաղուց արդեն սկզբնավորվել ու լայն թափ էր ստացել Եվրոպայում և Ռուսաստանում, այն է՝ սեփական արմատները, լեզուն, պատմությունը, բանարվեստն ու ազգագրությունը, մտավոր, հոգևոր և ժողովրդագիտական ողջ հարստությունը ճանաչելու, ուսումնասիրելու, արժեքավորելու ու համայն մարդկությանը ներկայացնելու գործում, աստիճանաբար մուտք էր գործում նաև հայ մտավորականության շրջանակները: Ժողովրդագիտական նյութերի

¹ ՀԱԲ, Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը, Ե., 1981, էջ 23, Հայ ժող. պատմություն, հ. VI, 1981, էջ 766:

² ՀԱԲ, նշվ. աշխ., էջ 23:

հավաքումը XIX դարի 50–60-ական թվականներին միաձուլվում է հայ ժողովրդի ինքնաճանաչման խնդրին³: Շուշի քաղաքը և իր մտավորականները անմասն չմնացին և որդեգրվեցին այդ հզոր շարժմանը:

Հնի և նորի սահմանագծում Արցախում և մասնավորապես Շուշիում պահպանված էին ազգային կյանքին բնորոշ բազմաթիվ կենցաղային ու հոգևոր արժեքներ, որոնց գրառումը հնարավորություն պետք է տար հետագա ուսումնասիրողին իր որոշակի խոսքն ասելու այդ բնագավառների մասին: Շուշին իր ազգաբնակչությամբ մի յուրօրինակ բնակավայր էր: Թաղերի անվանումներն արդեն իսկ ասում էին այն մասին, որ այնտեղ կենտրոնացված են Ագուլխից, Մեղրուց, Ղազանչիից (Նախիջևան), Արցախի տարբեր գյուղերից վերաբնակվածները⁴, որոնցից յուրաքանչյուրն իր հետ բերել էր իր տեղական բարբառն ու խոսվածքը, սովորույթները, կենցաղային իրերը, ընտանեկան հարաբերությունները, երկրագործական ու սիրային երգարվեստը, զրույցներն ու հեքիաթները, զվարճախոսություններն ու հուշապատումները, առած-ասացվածքներն ու դարձվածքները, անեծքներն ու օրհնանքները, աղոթքներն ու գուշակությունները, ավանդական տոնածիսական ողջ համակարգը, ժողովրդական բժշկությունը և այլն: Այս բոլորը ընդհանրանալով որոշակի կոլորիտային դիմագիծ են հաղորդել Շուշի քաղաքին, որտեղ XIX դարի 50–60-ական թվականներին կողք կողքի գոյատևում ու կենցաղավարում էին ավանդական միստոկացի նորմերն ու նորամուտ եվրոպական կենցաղին բնորոշ առարկաներն ու կենցաղավարության այլևայլ երևույթները:

1860 թ. տոհմիկ շուշեցի Առաքել Բահաթրյանը և իր եղբայրները՝ Գրիգորն ու Ալեքսանդրը, առաջինը արցախահայ իրականության մեջ հիմք դրեցին բանահյուսական նյութերի

³ Ա. Ղանալանյան, Դրվագներ հայ բանագիտության պատմության, Ե., 1985, էջ 15:

⁴ ՀԱԲ, Ստ. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 28:

հավաքմանը և օրինակ ծառայեցին⁵ իրենցից հետո եկող բանահավաքներին: Նրանք նյութերն ընդհատումներով գրառել են Շուշիում հունվարից մինչև հոկտեմբեր ամիսը: Հիմնականում գրառված նյութերը հեքիաթներ, զրույցներ, զվարճատեսություններ, մանկական ծաղրերգեր ու խաղիկներ են, ինչպես նաև Վարդավառի տոնակատարության նկարագրությունը: Ցավոք, բանահավաքները ոչ մի տեղեկություն չեն թողել ոչ գրառման պատճառների ու նպատակների, ոչ էլ բանասացների մասին: Միայն երբեմն խաղիկների բանասացների մասին ժլատ տեղեկություններ են տրվում, ինչպես օրինակ, «Նախշունին ասած, որ սվերալ ա Խասին ախջըկանիցը, Տոդա տհարափիցը, 1860, հոկտեմբերի 2», «10 ապրիլի 1860 թ. Հուռում նանին ասածը», «Բյուբուն ասածը» կամ «Համբարձումեն ասալ», «Ազիզ աքորն ասած», «Հացթոխեն ասածը, որ սվերալ ա Ղայբալու շենիցը», «2 հունվարի, 1860, Ազգաքորն ախչիկ Մարքարիտին ասածը, սվերալ ա ուրանց մահլյոմը գյուլում հայի տվող ախչկորանցիցը, Մեղրեցուց մահլին», «Աննին ասածը», «Տողըցի Խանումին ասածը»:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ խաղիկները Բահաթրյանները գրառել են հիմնականում կին բանասացներից: Խաղիկներն օգտագործվել են «համբարձումեն», «գյուլում հայի» ժամանակ, այսինքն՝ համբարձման տոնին: «Վըրթըվյուրին» տոնի նկարագրությունը հիշեցնում է համբարձման տոնը, և հնարավոր է, որ այս երկու տոները ձուլվել են իրար և ընկալվել որպես մեկ տոն, որովհետև բանահավաքը որոշակիորեն գրում է «վըրթըվերի տալ», «գյուլըմ հայի տալ ու խնդըմնոթեն անել»: Փաստորեն XIX դարի 50–60-ական թվականներին Արցախում համբարձման տոնին վիճակ հանելու սովորություն չկար⁶, և, ըստ Բահաթրյանների գրառման,

⁵ ՀԱԲ. С.А. Варданян. Вклад Тигра́на Навасардяна в армянскую фольклористику, т. XVII. Ереван, 1991, с. 33.

⁶ Եր. Լալայան, Երկեր, հ. 2, 1988, էջ 201, ԱՀ, Վարանդա, գիրք 9, Թ., 1898, էջ 347:

Շուշիում (նաև Արցախում) վիճակահանության ծեսը, որն ուղեկցվում էր «գյուլում հայ»-ով, կատարվում էր Վարդավառին:

Վարդավառի ծիսահամալիրի այս առանձնահատկությունը Բահաթրյաններից հետո գրանցել են նաև ուրիշ բանահավաքներ Հայաստանի այլ բնակավայրերում⁷:

Հատկանշական է, որ Շուշիում Վարդավառի նախորդ օրը կամ, ինչպես նշում է Բահաթրյանը, «Կիրակնամուտի իրիկունը» աղջիկները հավաքվում են մեկի տանը՝ իրենց հետ տանելով մթերքներ (յուղ, բրինձ, հաց և փող), եփում են բրնձով ու կաթով ճաշ (կաթնապուր), դրամով քաղցրավենիք են առնում: Ծիսակարգի կարևոր բաղադրիչներից մեկն այն է, որ վերցնում են մի «օշնակ», որի մեջ յուրաքանչյուրը մեկական քար է գցում, և վրան ջուր են լցնում հաջորդ օրվա վիճակահանության համար: Այդ գիշերը բոլոր աղջիկներն աշխատում են չքնել, որ «յուս տեճան, չյուն որ յուս տեճնողը արդար ա»: Ըստ ավանդության՝ այդ գիշեր լույս է իջնում բոլոր սրբերի, նահատակների ու եկեղեցիների վրա, և ով որ տեսնի այդ լույսը ու ինչ-որ բան խնդրի, կկատարվի⁸: Ծագումնաբանորեն հեթանոսական արմատներ ունեցող այս տոնը ներառել է մեկ այլ հեթանոսական տոնի՝ ջանգյուլումի կամ համբարձման տոնի ընթացակարգը և ձեռք բերել քրիստոնեական երանգավորում՝ ի դեմս երկնքից իջնող լույսի:

Առաքել Բահաթրյանը, Գերմանիայում բարձրագույն մանկավարժական կրթություն ստանալուց հետո, 1876 թ. մեկնում է Սիմֆերոպոլ և ստանձնում թաթարական դպրոցի տեսչի պաշտոնը⁹: Այնուհետև Ռ. Պատկանյանը 1880 թ. նրան առաջարկում է մեկնել Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում աշխատելու:

⁷ Ս. Սկրտչյան, Տոները դարաբաղցիների ավանդական կենցաղում, «ԼՂ անցյալը, ներկան և ապագան», միջ. գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ե., 2006, էջ 397:

⁸ ԱՀ, Վարանդա, 9 գիրք, 1898, էջ 348:

⁹ Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (հետայսու՝ ԳԱԹ), Կ. Կոստանյանի ֆոնդ, N 707 (135, 136, 137):

տելու, սակայն կաթողիկոսից սպասված հրավերը այդպես էլ չի ստացվում¹⁰: 1881 թ. նա հանձն է առնում Ներսիսյան դպրոցի մանկավարժության ուսուցչի պաշտոնը: Թիֆլիս տեղափոխվելը նրա առաջ նոր հեռանկարներ է բացում լայն գործունեություն ծավալելու համար: Նա նախ ձեռնամուխ է լինում դպրոցական անկատար դասագրքերը փոխարինելու նոր կատարյալ և մանկական հոգեբանությանը համապատասխանող դասագրքերով, որի համար դիմում է Ղազարոս Աղայանին, որն այդ ժամանակ (1878–1882 թթ.) Շուշիի թեմական դպրոցի տեսուչ էր¹¹, և խնդրում համագործակցել¹²: Նա ծրագրում է կազմել առաջին, երկրորդ և երրորդ տարվա սովորողների համար ընթերցարաններ, որոնց նյութը թարգմանելու էր գերմաներենից, իսկ Ղ. Աղայանն այն պետք է համալրեր առածներով, հանելուկներով, հեքիաթներով, հայ կյանքի նկարագրություններով ու բանաստեղծություններով: Ա. Բահաթրյանը կարևորում է բանահյուսության դերը աշակերտին «բարոյագիտական գաղափարներ» տալու¹³ և սեփական ժողովրդի արմատներին մերձենալու համար: Նա այդ ծրագրերը կյանքի կոչեց «Ուղեցույց հայ ուսուցչի» (1882 թ.), «Համառոտ գործնական հոգեբանություն» (1882 թ.), «Ծաղկոց» (1882 թ.), «Առաջին ընթերցարան» գրքերի միջոցով:

Հայ բանարվեստի արժեքները փրկելու և հրատարակելու համար 1882 թ. («Մշակ» N 4) բանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը կոչ է անում հայ ժողովրդին և մտավորականությանը օգնել իրեն՝ հավաքելու բանահյուսական և ազգագրական նյութեր: 1883 թ. Ա. Բահաթրյանը կնքեց իր մահկանացուն, և թե ով և երբ է Բահաթրյան եղբայրների՝ 1860-ական թվականներին գրառած բանահյուսական նյութերի ձեռագիր ժողովածուն հանձնել Տ. Նավասարդյանին,

¹⁰ ԳԱԹ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, N 642–643:

¹¹ Հայ նոր գրականության պատմություն, հ. III, Ե. 1964, էջ 277:

¹² ԳԱԹ, Ղ. Աղայանի ֆոնդ, N 260–261:

¹³ ԳԱԹ, նույն տեղում:

հայտնի չէ: Հնարավոր է, որ Ա. Բահաթրյանը դեռևս իր կենդանության ժամանակ հանձնած լինի այդ նյութերը Տ. Նավասարդյանին, հնարավոր է նաև, որ հետագայում Բահաթրյան եղբայրներից որևէ մեկը հանձնած լինի: Մենք հակված ենք երկրորդ տեսակետին, որովհետև Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների» առաջին երկու գրքերը լույս են տեսել 1882–83 թվականներին, և եթե այդ նյութերը ձեռքի տակ լինեին, նա կընդգրկեր առաջին հատորներից որևէ մեկում, մինչդեռ նա այդ ձեռագիր հավաքածուից 11 հեքիաթներ ընդգրկել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի VIII (1894 թ.), IX (1902 թ.), X (1903 թ.) գրքերում՝ հետևյալ ծանոթագրությամբ. «Ղարաբաղի բարբառով գրված սույն հեքիաթները հանգուցյալ մանկավարժ Առաքել Բահաթրյանցի սովորած ժողովածուից, որ հանձնված է մեզ տպագրելու»¹⁴:

Բահաթրյանների նյութերն ընդգրկված են Տիգրան Նավասարդյանի ֆոնդի մեջ և պահվում են Հայաստանի ազգային արխիվում¹⁵:

1973 թ. Բահաթրյան եղբայրների գրառած հեքիաթները (68 միավոր), ներառյալ նաև Տ. Նավասարդյանի հրատարակածները, տպագրվել են «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության VI հատորում¹⁶:

XIX դարի վերջին իր նշանակությամբ Շուշին Անդրկովկասի երրորդ քաղաքն էր¹⁷, այնտեղ էին կենտրոնացած Արցախի հիմնական կրթական օջախները և տպարանները (Շուշիում կար երկու տպարան. 1830 թ. Բազելի միսիոներների բացած տպարանը և 1877 թ. Մահտեսի Հակոբյանի բացած տպարանը)¹⁸: Հասարակական կյանքը Շուշիում առաջընթաց

¹⁴ Հայ ժողովրդական հեքիաթներ, ժող. Տիգրանայ Նավասարդյանց, VIII գիրք, 1894, էջ 36:

¹⁵ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 484:

¹⁶ Հայ ժողովրդական հեքիաթներ, ԳԱ հրատ., Ե., 1973:

¹⁷ Нагорный Карабах (историческая справка). Е., 1988, с. 83.

¹⁸ ԱԶ, Բ գիրք. Թ., 1897, էջ 107:

էր ապրում, այնտեղ տպագրվում էին գրքեր և պարբերական մամուլ: XIX դարի վերջում Շուշիում տպագրվում էր 21 անուն թերթ ու ամսագիր (որից 19-ը՝ հայերեն, 2-ը՝ ռուսերեն)¹⁹: 80–90-ական թվականներին Շուշիում ժողովրդագիտության նկատմամբ հետաքրքրությունն ավելի էր աճել, և նյութերի հավաքումն էլ թևակոխել էր նոր փուլ: Շուշեցիների կյանքը, կենցաղը, սովորույթները, ընտանեկան հարաբերությունները, բանահյուսությունը, Շուշիի անցյալն ու ներկան հայտնվեցին մտավորականների հետաքրքրության կենտրոնում: Այդ զարգացումներին նպաստեց հայագետ Մանուկ Աբեղյանի ներկայությունը, որը 1887–89 թթ. վարում էր Շուշիի թեմական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչի պաշտոնը: Նրա կազմակերպած գրական խմբակը նոր լիցք է հաղորդում Շուշիի մտավորականներին ու երիտասարդությանը, իսկ 1888 թ. «Սասնա ծռեր»-ի՝ էջմիածնում մոկացի Նախտ քեռուց իր գրառած պատումի ընթերցումը հիացնում էր պատճառում ունկնդիրներին²⁰:

Ս. Հարությունյանը, կարևորելով Շուշիում լույս տեսած «Պավիթ և Սհեր» ժողովրդական վեպի երկրորդ պատումի նշանակությունը, հավաստում է, որ «հայ ժողովրդական նորահայտ վեպը ոչ թե պատահական կամ տեղական բնույթի մի ստեղծագործություն է, սոսկ Տարոնին հատուկ, այլ մի համազգային վեպ»²¹:

Շուշիի թեմական դպրոցն այն կրթօջախն է, որի անվան հետ կապվում են հայ շատ հայտնի մտավորականների անուններ: 1895–97 թթ. արցախյան արմատներով ու եվրոպական կրթությամբ երվանդ Լալայանը նույնպես աշխատում է Շուշիի թեմական դպրոցում: Ե. Լալայանը հայ ժողովրդագիտությունը վեր հանելու նկատառումով հիմնում է «Ազգագրական հանդես»-ը, որի առաջին գիրքը լույս է տեսնում Շուշիում 1896 թ.:

¹⁹ Нагорный Карабах, с. 53.

²⁰ Ս. Հարությունյան, Մանուկ Աբեղյան, Ե., 1970, էջ 22:

²¹ Նույն տեղում:

«Ազգագրական հանդես»-ի առաջին գրքի հրատարակ գալը խոշոր իրադարձություն էր Շուշիի հոգևոր կյանքում: Ե. Լալայանը, իր շուրջը համախմբելով Արցախի մտավորականներին, Շուշիում և շրջակա գյուղերում հավաքում է ազգագրական բանահյուսական մեծաքանակ նյութեր, որոնց հիման վրա կազմում է «Ազգագրական հանդեսի» երկրորդ գիրքը՝ «Վարանդա» խորագրով, որի տակ ավելացնում է՝ «նյութեր ապագա ուսումնասիրության համար»: «Ազգագրական հանդես»-ով հիմք դրվեց հետագա ժողովրդագիտական ուսումնասիրությունների համար:

1891 թ. Շուշիում լույս է տեսնում շուշեցի մի ուրիշ մտավորականի՝ Ավետիք Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գիրքը: Հեղինակը գրքում քննության է առնում հայոց հին տաղաչափական արվեստը ըստ Վահագնի, Արտաշեսի, Վարդգեսի վիպասանական երգերի, եկեղեցական շարականների, ինչպես նաև ժողովրդական երգերի ու աղոթքների: 1860 թ. Ավետիք Բահաթրյանը կազմել է նաև զավառական բառերի բառարան շուրջ 50000 բառահոդվածով, որի ձեռագիրը Հ. Աճառյանն օգտագործել է Ղարաբաղի բարբառի իր ուսումնասիրության համար²²:

Արցախի բանահյուսությունը տվել է մի անզուգական կերպար՝ Պըլը Պուղի, որն ապրել է XVIII դարում (ծն. 1731 – մահ. 1810), և դեռևս իր կենդանության օրոք սրախոսություններով, հնարամտություններով ու զվարճաբանություններով դարձել է վիպական հորինվածքների կենտրոն ու շարժիչ ուժ: Պըլը Պուղին այնքան սիրված հերոս էր, որ նրա մասին պատմվող զվարճախոսությունները բերնբերան հասել էին XIX դարի 70–80-ական թվականները: Երջանկահիշատակ Մակար Բարխուդարյանը, որի ավանդը շատ մեծ է ժողովրդագիտության, վիմագրության հավաքման ու հրատարակման ուղ-

²² Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968, էջ 314:

ղությամբ²³, նախածեռնում է Պուղու մասին զվարճախոսությունների հավաքման գործը: 1883 թ. Մ. Բարխուդարյանը «Պըլը Պուղի» վերտառությամբ հրատարակում է զվարճախոսությունների մի ժողովածու, որն ընդգրկում էր 189 միավոր: Մ. Բարխուդարյանը, առաջաբանում անդրադառնալով Պուղու կերպարին, ավստասանքով գրում է. «Շատ ու շատ ցավալի է, որ Պուղին ունեցած չէ ժամանակակից մի գրող, որով յուր խոսածներն ամբողջությամբ լույս տեսնեին, յուր հիշատակն անմահանար և մեր աղքատ գրականությունը ճոխանար»²⁴: Առաջնորդվելով հայկական «վարուց և բարուց» արժեքները պահպանելու ցանկությամբ՝ նա ծերունիներից հավաքում է «Պուղու խոսածները, որք ավանդությամբ մնացած էին հասարակության մեջ, զորս և ահա լույս հանելով կը նվիրեն մեր սիրելի ազգին»²⁵: Այս ժողովածուով Պուղին համահայկական ճանաչում ձեռք բերեց, իսկ բանավոր ավանդությով XX դար հասած նյութերը գրառվեցին և հրատարակվեցին նաև Ս. Գրիգորյան-Սպանդարյանի և Ս. Իսրայելյանի կողմից²⁶:

XIX դարի 80–90-ական թվականներին Արցախի բնակավայրերում, նաև Շուշի քաղաքում ժողովրդագիտական բազմաքանակ նյութեր է հավաքել Խաչիկ Դադյանը: Հատկապես արժեքավոր են Խ. Դադյանի կազմած՝ Շուշի քաղաքի տոհմերի, արհեստավորների, բժիշկների, ուսուցիչների, գրողների, երգիչ-աշուղների, զինվորականների, ղաչաղների ցուցակները և բնակչության կյանքին վերաբերող բազմաթիվ այլ փաստաթղթեր և տեղեկություններ²⁷: Խ. Դադյանն իր եղբոր՝ Արամ Դադյանի հետ Շուշիում գրի է առել նաև հեքիաթներ ու բանահյուսական այլ ժանրեր: Խ. Դադյանի հավաքած ժողովրդագի-

²³ Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, Բարոյական առածներ, հավաքագրեց ուստա Գևորգ Բարխուդարյանց, Տփլիս, 1898:

²⁴ Մ. Բարխուդարյանց, Պըլը Պուղի, Թիֆլիս, 1883, էջ 9:

²⁵ Նույն տեղում, էջ 7:

²⁶ Ս. Գրիգորյան-Սպանդարյան, Լեռնային Դարաբաղի բանահյուսությունը, Ե., 1971, Ս. Իսրայելյան, Պըլը Պուղի, Ե., 1956:

²⁷ Հայաստանի ազգային արխիվի Խ. Դադյանի ֆոնդ, N 319:

տական և բանահյուսական նյութերը հիմնականում ձեռագիր վիճակում են²⁸:

Շուշի քաղաքի ժողովրդագիտական նյութերի հաջորդ փուլը կապվում է շուշեցի հայտնի մտավորական, մասնագիտությամբ գյուղատնտես Կոստանդին Մելիք-Շահնազարյանի անվան հետ: Կ. Մելիք-Շահնազարյանը XIX դարի 80-ական թվականներից Տմբլաչի Խաչան ստորագրությամբ թղթակցում էր «Նոր Դար» պարբերականին և իր հերոսի անթերի դարաբաղյան բարբառով ազգագրական-բանահյուսական նյութերի վարպետ կիրառմամբ սրամիտ ու դիպուկ դիտարկումներով վերլուծում էր գավառական Շուշի քաղաքի կենցաղն ու թերությունները:

Կ. Մելիք-Շահնազարյանը ազգագրական և բանահյուսական նյութերի հավաքումն սկսել է 1874 թ. և շարունակել մինչև 1930 թ.: Այդ նյութերից մի զգալի քանակ մեզ փոխանցվել է «Տմբլաչի Խաչանի» միջոցով: Տմբլաչի Խաչանի բերանով նա հայտնում է, որ Շուշիում «աթաբաբադան», այսինքն՝ հնուց ավանդված են գուշակության ու կախարդության արվեստի հետ կապված մի շարք «փեշակներ»՝ «փալչի», «ջինդար», «գարի գծող», «կուռը չափող», «աղոթքարար», «գրբաց», «սրտըմնա հավաքող», «վախ չափող», «տանակ ձգող»²⁹: Ցավոք, բանահավաքը միայն թվարկել է գուշակության գոյություն ունեցող տեսակները և ժամանակին չի կարևորել այս նյութերի գրառման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտար ժողովրդագիտական մի ողջ բնագավառի ուսումնասիրության: «Ձուռնա-Տմբլաչ»-ի I մասում Մելիք-Շահնազարյանը մի հետաքրքիր ժողովրդական սովորություն է օգտագործում, որը կոչվում է «Աղամ-աղամ»: Սա մի ծիսական գործողություն է շուշեցիների կենցաղից, որն ուղեկցվում է

²⁸ Ա. Ղազիյան, Խաչիկ Ծ. վարդապետ Դադյանի ժողովրդագիտական-բանահավաքչական գործունեությունը, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1999, N 1-12, 15 394:

²⁹ ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, N 10:

հմայական խոսքով³⁰, չըք-չորեքշաբթի վաղ առավոտյան շուշեցիները լուռ ու մունջ վեր էին կենում, երկու քար վերցնում՝ մեկը հալալ (մաքուր), մյուսը՝ հարամ (անմաքուր) տեղից, քարերը քսում էին իրար և ասում. «Աղամ, աղամ, լյուն աղամ, վեչիլն աղամ, անիծն աղամ, մունն աղամ, մոծակն աղամ, մլաքն աղամ, մորեխն աղամ, բողոճն աղամ, կարիճն աղամ, մոկն աղամ: Մախլաս հինջ փիս պաներ կա, լոխ էլ աղըն են, վեր տարին բախտավոր ինի»³¹: Այս հմայական արարողության միջոցով շուշեցիներն ակնկալում էին, որ իրենց ցանկությունը կկատարվի, և չարիք առաջացնող պատճառները կվերանան:

4. Մելիք-Շահնագարյանի ժողովրդագիտական նյութերի հավաքածուները պահվում են Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում³² և ՊԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում³³: Շուշի քաղաքի բանահյուսության մեծագույնից նա հավաքել է հեքիաթներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, օրհնանքներ, անեծքներ, շուտասելուկներ: Առանձնահատուկ արժեք են ներկայացնում «ժողովրդական բժշկարան» և «Տնայնագործությունը Ղարաբաղում» ձեռագիր հավաքածուները: Ժողովրդական բժշկարանը պարունակում է աչքացավի, գլխացավի, ականջացավի, բերանի հիվանդությունների, փորացավի, ջերմի, հազի, թարախակալած վերքերի, մաշկային հիվանդությունների, օծահարվածների, թունավորվածների և բազում այլ հիվանդությունների՝ դարավոր փորձի վրա խարսխված ժողովրդական բուժամիջոցներ, ինչպես նաև նախանշաններ, որոնց միջոցով որոշում են հղի կնոջ ապագա երեխայի սեռը: Եղած նյութի առատ քանակությունը ենթադրել է տալիս, որ

³⁰ Ա. Իսրայելյան, Ոչ իրեղեն հմայական պահպանակներ, «Հայ ժողովրդական մշակույթ (նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի)», XIII, Ե., 2006, էջ 77-78:

³¹ ՊԱԹ, Կ. Մելիք-Շահնագարյանի ֆոնդ N 3, «Ձուռնա-Տմբլա», I մաս (1886-1905):

³² ՊԱԹ, Կ. Մելիք-Շահնագարյանի ֆոնդ, գ. 70, 98:

³³ ՀԱԲԱ ՖԲԻ: 2904-3175:

XIX դարի վերջում Շուշիում եվրոպական կրթություն ստացած բժիշկներին զուգահեռ դեռևս գործում էին ավանդական միջոցներով բուժող ժողովրդական հեքիմները: Այն, որ ավանդական միջոցները դեռևս հարգի ու կիրառելի էին, տեղեկանում ենք նաև «Տնայնագործությունը Ղարաբաղում» հավաքածուից: Այս հավաքածուում բանահավաքը ներկայացրել է՝ 1860 թ. և հետո Շուշի քաղաքում և շրջակա գյուղերում ինչպես են մշակել բուրդը, թելը նախապատրաստել գորգագործության համար, ինչ գործիքներ են գործածել գորգագործները և ինչ ծիսական սովորույթներ են ուղեկցել գորգը կտրելու արարողությանը: Գորգը կամ կարպետը կտրելու ժամանակ չբեր կանայք ուստայնի ներքևի մասում մնացած թելերը կտրելուց առաջացած ծակով երեք անգամ անցնում էին, ապա նստում և ոտքերը մեկնում ուստայնի տակ, կտրած գորգը ընկնում էր նրանց վրա, ապա հանած ասպը տալիս էին մի տղայի, որը ծի շինած նստում էր ասպի վրա, դուրս վազում և նայած, թե առաջինը որ սեռի ներկայացուցչի կհանդիպեր, ըստ այդմ էլ որոշում էին ապագա երեխայի սեռը³⁴: Այս ծեսն իր բնույթով հիշեցնում է ամուլ կնոջը տղա տվող Ծակ քարից անցկացնելու գործողությունը, որը Ղարաբաղում շատ տարածված էր³⁵:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մելիք-Շահնագարյանի արխիվի բանահյուսական նյութերը տպագրվել են հրատարակված գիտական համահավաքներում³⁶: Նրա հավաքած ազգագրական և բանահյուսական նյութերի մի մասը դեռևս իր կենդանության օրոք տպագրվել է «Հանդես ամսօրեայ»-ի էջերում³⁷:

³⁴ ՀԱԲԱ ՖԲԻ: 2922,02-2924,00:

³⁵ ԱԳ, Վարանդա, է գիրք, 1897, էջ 145:

³⁶ Ա. Ղանալանյան, Առածանի, Ե., 1960, Ա. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Ե., 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, Ե., 1973:

³⁷ Թ. Հայրապետյան, Կոստանդին Մելիք-Շահնագարյանի (Տմբլաչի խաչան) ժողովրդագիտական գործունեությունը, «ԼՂՅ անցյալը, ներկան և

Շուշիի ժողովրդագիտական նյութերի գրառման երրորդ փուլը համընկավ խորհրդային կարգերի հաստատման հետ: Խորհրդային տարիներին 1922-ից մինչև 1960-ական թվականները, Շուշիի ժողովրդագիտական նյութերի հավաքման գործում մեծ ներդրում ունեցավ բնիկ շուշեցի Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանը: Դեռևս դպրոցական ուսումնառության տարիներին նա սիրով ունկնդրում էր Ղուևաշ Ավագյանի պատմած հեքիաթները, որի մասին հետագայում գրել է. «Նրա պատմած հեքիաթներից առաջին անգամ գրի են առել 1922 թվականի ձմռանը, Շուշիում, առանց մտածելու, որ հետագայում ես ժողովրդական բանահյուսության հավաքող պիտի դառնամ»³⁸: Հետագայում նա ստանում է բանասիրական կրթություն, պաշտպանում թեկնածուական թեզ, աշխատում է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտում՝ որպես դասախոս և, իր աշխատանքին զուգահեռ, տարիներ շարունակ հավաքում է բանահյուսական նյութեր ոչ միայն Շուշիում, այլև Լեռնային Ղարաբաղի գյուղերում: Նրա երկարամյա բանահավաքչական աշխատանքի արդյունքում կուտակվել են ժողովրդական բանահյուսության բազմաքանակ նյութեր՝ հեքիաթներ, զրույցներ, զվարճախոսություններ, ավանդույթյուններ, խաղիկներ, հանելուկներ, առած-ասացվածքներ, դարձվածքներ: Նա ուսումնասիրել է Ղարաբաղի բարբառը և Շուշիի ենթաբարբառը: Ուսումնասիրության մեջ նա երբեմն անհիմն և միամիտ կարծիք է հայտնում՝ բացարձակացնելով Ղարաբաղի բարբառը, որը երևի պայմանավորված է նրա անսահման սիրով դեպի իր հայրենի բնաշխարհը, լեզուն ու հոգևոր մշակույթը: Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի հա-

ավագան» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ե., 2006, էջ 344: «Հանդես անսորեայ», Ղարաբաղի բարբերեն, 1928, էջ 552-559, ՀԱ, Հանելուկներ Ղարաբաղի լեզվով, 1928, էջ 475-478, ՀԱ, Առակներ Ղարաբաղի բարբառով, 1930, էջ 596-601, ՀԱ, Նյութեր Ղարաբաղի ազգագրության համար, 1931, էջ 246-252:

³⁸ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. V, Ե., 1966, էջ 682:

վաքածուն ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվի ստվարածավալ ֆոնդերից մեկն է, այն պահվում է FFIX: Ֆոնդում 0001-7516 թվահամարների տակ. սրանից զատ արխիվի չմշակված ֆոնդում պահվում է երկու մեքենագիր գիրք (առաջինը՝ 526 էջ, երկրորդը՝ 471 էջ), որը վերնագրված է «Կինոժապավեն Շուշի քաղաքից և Ղարաբաղից» (պատմալիրիկական նոր ժանրի վեպ): Այս երկհատոր գիրքը հիմնված է բանահավաքի հուշերի վրա և շատ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Շուշի քաղաքի, նրա բնակիչների կենցաղի, սովորույթների, տարբեր իրադարձությունների ու մարդկանց մասին: Գրքում տեղադրված են նաև հին Շուշիի լուսանկարներ՝ Մարիամյան օրիորդաց դպրոցի շենքը, Մարիամյան օրիորդաց և հայոց թեմական դպրոցների հոգաբարձուների և ուսուցիչների լուսանկարները, քաղաքի համայնապատկերը, Ղազանչեցոց եկեղեցին և նրա շրջակայքը 1905 թվականից հետո, թեմական դպրոցի շենքը և այլն: Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի հավաքածուի հիման վրա ինստիտուտը հրատարակել է երկու ժողովածու՝ «Հայ ժողովրդական հեքիաթներ» համահավաքի V հատորը³⁹ և «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը»⁴⁰: Առաջին ժողովածուի մեջ ներկայացված են Շուշիում և Ղարաբաղի գյուղերում գրառված հեքիաթները, իսկ երկրորդ ժողովածուում ընդգրկված են խաղիկներ, հեքիաթներ, ավանդույթյուններ, հեքիաթ-հանելուկներ, երգիծական զրույցներ և զվարճախոսություններ Պլըլ Պուղու մասին, հանելուկներ, շուտասելուկներ և բանաձևային բանահյուսություն:

Շուշիի ժողովրդագիտական նյութերի հավաքման վերջին ակորդը 1970 թվականին ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական-բանահյուսական գիտ-

³⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. V, Ե., 1966:

⁴⁰ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրերի պատրաստումը և ծանոթագրությունները՝ Մ. Գրիգորյան-Սպանդարյանի), Ե., 1971:

արշավն էր՝ Դ. Վարդունյանի գլխավորությամբ: Գիտարշավի մասնակիցները Շուշի քաղաքում և շրջակա գյուղերում հավաքել են կարևոր նյութեր, իսկ Սվետլանա Վարդանյանը գրառել է ինքնատիպ բանահյուսական նյութեր: Նյութերը պահվում են ինստիտուտի բանահյուսության⁴¹ և ազգագրության արխիվներում:

Շուշի քաղաքի հոգևոր արժեքները գրառող բանահավաքները հնարավորինս պահպանել են տեղական խոսվածքի հնչյունաբանական ու քերականական առանձնահատկությունները, իրենց հավաքածուներին կցել են բարբառային բառարաններ (Ս. Բարխուդարյան, Կ. Մելիք-Շահնազարյան, Մ. Գրիգորյան-Սպանդարյան): Գրառված նյութերի մեջ մեծ քանակ են կազմում հեքիաթները, որոնց շարքում առկա են գրեթե հեքիաթների բոլոր տիպերը: Սեկ հարյուրամյակի ընթացքում նվիրյալ հայ մտավորականների մի խումբ, իր կատարած գործի կարևորությունը գիտակցելով, Շուշի քաղաքից հավաքել ու կուտակել է ժողովրդագիտական ինքնատիպ ու արժեքավոր հարուստ նյութեր, որոնց գիտական հետազոտությունը դեռևս ըստ արժանվույն կատարված չէ: Դիտարկումները ցույց են տալիս, որ Շուշի քաղաքի ժողովրդագիտական նյութերն իրենց բնույթով բազմազան են և հնարավորություն են տալիս ոչ միայն պատկերացում կազմելու, թե անցյալում ինչպիսի նյութեր են կենցաղավարել շուշեցիների առօրյայում, այլև գիտական ուսումնասիրության միջոցով տարբերակել Շուշիի բանահյուսության ու ազգագրության տեղը Արցախի բանահյուսական ու ազգագրական ժառանգության մեջ:

⁴¹ ՀԱԲԱ FFVII: 6123–6322.